ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի մարտի 27-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/1 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի հոկտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև՝ 2015 թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 25.09.2015թ. թիվ 1095-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-2
27.03.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 01 » հոկտեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Սահակյանշին» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս ընկերության տնօրեն Ս.Սահակյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 27.03.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15/1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.09.2015թ. թիվ 1095-Ն որոշումը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը, այն սահմանելով մինչև 2015 թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Սահակյանշին» ՓԲԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ք.Երևան, Արարատյան-117/1
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900013202016, 900013574018	Հ/Հ 217001075852001
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 02224769
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	«Սահակյանշին» ՓԲԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Ս.Սահակյան**
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ